Համաձայն «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 8-րդ, 10-րդ, 24-րդ հոդվածի 7-րդ և 25-րդ հոդվածի 1-ին մասերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 1024-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման վերնագիրը «ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ» բառից հետո լրացնել «ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ» բառերով.

2) որոշման նախաբանը «10-րդ,» բառից հետո լրացնել «22-րդ,» բառով.

3) որոշման նախաբանը, 1-ին կետը և 2-րդ կետի 7-րդ ենթակետը «անաշխատունակության» բառից հետո լրացնել «և մայրության» բառերով.

4) որոշման 2-րդ կետի 2-րդ և 6-րդ ենթակետերում «նպաստի» բառը փոխարինել «և մայրության նպաստների» բառերով.

5) որոշման 2-րդ կետի՝

ա. 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) վարձու աշխատողների ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստները վճարելու համար գործատուի ծախսած դրամական միջոցները փոխհատուցելու կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.»,

բ. 8-րդ ենթակետում «վճարված» բառը փոխարինել «վարձու աշխատողին վճարված մայրության» բառերով,

գ. 9-րդ ենթակետում «նպաստի գումարի» բառերը փոխարինել «ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների գումարների» բառերով.

6) որոշումը 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-ին կետով.

«2.1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում համատեղ հաստատել բժշկական հաստատություններն անաշխատունակության թերթիկների ձևաթղթերով ապահովելու կարգը և բժշկական հաստատության՝ անաշխատունակության թերթիկները լրացնելու և քաղաքացիներին տրամադրելու ներքին կանոնները:».

7) որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

8) որոշման N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի.

9) որոշման N 4 հավելվածի ժամանակավոր անաշխատունակության թերթիկի ձևի՝

ա. հատման գծից վերև ընկած մասում 1-ին տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՆԱԽՆԱԿԱՆ-ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ N _____ ԹԵՐԹԻԿԻ Տրված է _____20 թ.

(համապատասխանն ընդգծել) (ամսաթիվը, ամիսը)»,

բ. հատման գծից ներքև ընկած մասում «ՌԵԺԻՄ» բառից հետո ավելացնել հետևյալ տողերը՝

«□ ամբուլատոր
□ ստացիոնար
_____

(համապատասխանը նշել) ».

գ. 1.1-ին կետը «գործատուի» բառից հետո լրացնել (մայրության նպաստի դեպքում, ըստ անհրաժեշտության, բոլոր գործատուների)» բառերով,

դ. 1.2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.3-րդ կետով.

«

1.3.	Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի եկամտի չափը (դրամ)		

»,

ե. 3-րդ կետը «Աշխատանքային» բառից հետո լրացնել «կամ օրացուցային» բառերով.

10) որոշման N 5 հավելվածի՝

ա. 2-րդ կետում «Սահմանված» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետով հաստատված» բառերով,

բ. 3-րդ կետում «ժամանակավոր անաշխատունակության» բառերը փոխարինել «անաշխատունակության» բառով, 5-րդ կետում «անաշխատունակության նպաստների» բառերը՝ «անաշխատունակության և մայրության նպաստների» բառերով, 8-րդ կետում «ժամանակավոր անաշխատունակության թերթիկ» բառերը՝ «անաշխատունակության թերթիկ» բառերով, իսկ 4-րդ կետում «ամբուլատորիաների բուժող բժիշկները» բառերը՝ «առողջության առաջնային պահպանման կենտրոնների, ընտանեկան բժիշկների անհատական կամ խմբային անկախ պրակտիկաների բուժող բժիշկները» բառերով,

գ. 5-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-ին կետով.

«5.1. Հղիության ու ծննդաբերության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում անաշխատունակության թերթիկ տրվում է նաև

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ չաշխատող, սակայն մայրության նպաստի իրավունք ունեցող անձանց:»,

դ. 6-րդ կետում «հատկացվում» բառը փոխարինել «տրվում» բառով, իսկ «անաշխատունակությունը» բառից առաջ լրացնել «ժամանակավոր» բառով,

ե. 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Անաշխատունակության թերթիկները լրացվում են հայերեն՝ ընթեռնելի ձեռագրով, առանց ջնջումների: «Եզրափակիչ ախտորոշում» սյունակում պարտադիր նշվում է հիվանդի ախտորոշումը՝ ելնելով հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգիչով սահմանված եզրույթներից՝ այն չփոխարինելով հիվանդության ախտանշաններով կամ համախտանիշներով:»,

զ. 7-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7.1-ին, 7.2-րդ և 7.3-րդ կետերով.

«7.1. Սույն կարգի խախտմամբ լրացված անաշխատունակության թերթիկները համարվում են սխալ լրացված:

7.2. Սխալ լրացված և քաղաքացուն չտրված կամ տրված, սակայն նրա կողմից վճարման չներկայացված անաշխատունակության թերթիկն ուղղման ենթակա չէ: Դրա փոխարեն սույն կարգով սահմանված կարգով տրվում է նոր անաշխատունակության թերթիկ:

7.3. Եթե սխալ լրացված և քաղաքացուն տրված անաշխատունակության թերթիկը քաղաքացու կողմից արդեն ներկայացվել է վճարման, ապա կատարված ուղղումները հաստատվում են բժշկական հաստատության կնիքով և տնօրենի ստորագրությամբ՝ նշելով ուղղման հիմքերը:»,

է. 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. 15 օրվանից ավելի տևողությամբ ժամանակավոր անաշխատունակության դեպքում, անաշխատունակ անձի կամ նրան խնամող անձի պահանջով, յուրաքանչյուր 15-րդ օրվանից հետո ժամանակավոր անաշխատունակության փաստացի օրերի համար տրվում է անաշխատունակության թերթիկ, որի աշխատանքի ներկայանալու օրը նշելու համար նախատեսված տողում կատարվում է «Շարունակելի» նշումը:»,

ը. 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Սույն կարգի 9-րդ կետում և 12.1-ին կետի 3-րդ ենթակետում նշված դեպքերում ժամանակավոր անաշխատունակության յուրաքանչյուր հաջորդ ժամանակահատվածի համար տրվող անաշխատունակության թերթիկում նշվում են նաև նախորդ անաշխատունակության թերթիկի սերիան ու համարը, «Անաշխատունակության սկիզբը» սյունակում՝ նախորդ անաշխատունակության թերթիկի «Անաշխատունակության վերջը» սյունակում նշված օրվան հաջորդող օրը:»,

թ. 10-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10.1-ին կետով.

«10.1. Սույն կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 25-րդ և 26-րդ կետերով սահմանված կարգի խախտմամբ լրացված անաշխատունակության թերթիկները չեն համարվում ժամանակավոր անաշխատունակության նույն դեպքի համար տրված (շարունակելի չեն):»,

ժ. 11-րդ կետում «անաշխատունակության նպաստ» բառերը փոխարինել «ժամանակավոր անաշխատունակության կամ մայրության նպաստ» բառերով,

ժա. 11-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11.1-ին կետով.

«11.1. Տնային կանչի կամ ամբուլատոր այցի հիման վրա անաշխատունակության թերթիկը քաղաքացուն տրվում է (բացվում է) մինչև 5 օրացուցային օրվա համար

ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատության բուժող բժշկի կողմից, որից հետո անաշխատունակության ժամկետի յուրաքանչյուր երկարաձգում կատարվում է տվյալ հաստատության՝ սույն կետում նշված հանձնաժողովի, իսկ դրա բացակայության դեպքում՝ տնօրենի համաձայնությամբ՝ նկարագրելով տվյալ հիվանդության ախտորոշման հիմնավորումը, ընթացքը և կատարված լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատությունում տվյալ հիվանդին բուժող բժիշկը, առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժիշկը, փորձաքննության գծով տնօրենի տեղակալը, իսկ այդ պաշտոնի բացակայության դեպքում՝ ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատության տնօրենը (այսուհետ՝ հանձնաժողով):»,

ժբ. 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Հիվանդանոցային պայմաններում բուժման անհրաժեշտության դեպքում քաղաքացուն կամ հիվանդ երեխա խնամող անձին բուժման ամբողջ ժամանակահատվածի համար տրվում է ժամանակավոր անաշխատունակության թերթիկ:»,

ժգ. 12-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12.1-ին, 12.2-րդ և 12.3-րդ կետերով.

«12.1. Հիվանդանոցային բժշկական հաստատությունից (ստացիոնարից) դուրս գրվելիս ժամանակավոր անաշխատունակության թերթիկում որպես անաշխատունակության ժամանակահատվածի վերջին օր նշվում է (ժամանակավոր անաշխատունակության թերթիկը փակվում է)՝

1) դուրս գրվելու օրը, եթե հիվանդը դուրս է գրվել՝ էպիկրիզում «առողջացում» գրառմամբ, գործնականում առողջ է՝ լրիվ ապաքինվել է: Եթե «առողջացում» գրառմամբ

դուրս գրվելիս հիվանդը կարիք ունի ամբուլատոր պայմաններում ևս մի քանի օր բուժումը շարունակելու կամ, բուժող բժշկի գնահատմամբ՝ միջավայրին հարմարվելու, ապա որպես անաշխատունակության ժամանակահատվածի վերջին օր կարող է նշվել առավելագույնը հիվանդանոցային բժշկական հաստատությունից (ստացիոնարից) դուրս գրվելու օրվան հաջորդող 3-րդ օրացուցային օրը.

2) դուրս գրվելու օրվան հաջորդող առավելագույնը՝ 7-րդ օրացուցային օրը, եթե հիվանդը դուրս է գրվել՝ էպիկրիզում «լավացմամբ» գրառմամբ և կարիք ունի հետագա վերականգնողական բուժման.

3) դուրս գրվելու օրը՝ աշխատանքի ներկայանալու օրը նշելու համար նախատեսված տողում կատարելով «Շարունակելի» նշումը, եթե նա կարիք ունի ամբուլատոր բուժման: Այս դեպքում «Շարունակելի» նշում կատարելու անհրաժեշտությունը որոշում է հանձնաժողովը (հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տվյալ հիվանդին ստացիոնարում բուժող բժիշկը, տվյալ բաժնի վարիչը և բուժական գծով տեղակալը):

12.2. Եթե հիվանդանոցային բժշկական հաստատությունից (ստացիոնարից) դուրս գրվելու օրվանից հետո մինչև սույն կարգի 12.1-ին կետում նշված՝ հիվանդանոցային բժշկական հաստատության (ստացիոնարի) կողմից ժամանակավոր անաշխատունակու-թյան թերթիկը փակելու օրն ընկած ժամանակահատվածում հիվանդի մոտ ի հայտ են գալիս հիվանդանոցային կամ հետհիվանդանոցային բուժման բարդություններով պայմանավորված ախտանիշներ, ապա ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատության բուժող բժիշկն իրավասու է անաշխատունակության ժամկետը երկարաձգել սույն կարգի 11.1-ին կետով սահմանված կարգով, իսկ անաշխատունակության թերթիկը լրացվում է սույն կարգի 10-րդ կետով սահմանված կարգով:

12.3. Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատության կողմից բուժում ստանալու դեպքում քաղաքացու ախտաբանական վիճակի, դրա հետևանքների կամ բարդությունների վերացման օրն անաշխատունակության թերթիկը փակում է բուժող բժիշկը և ներկայացնում է փորձաքննության գծով տնօրենի տեղակալի կամ փորձաքննություն իրականացնելու իրավասություն ունեցող անձի հաստատմանը, իսկ կնիքի առկայության դեպքում կնքվում է:»,

ժդ. 13-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 13.1-ին կետով.

«13.1. Այլ երկիր ժամանակավոր անաշխատունակության թերթիկը ներկայացնելու դեպքում այն հաստատում է բժշկական հաստատության տնօրենը և կնքում զինանշանի պատկերով կնիքով (դրա առկայության դեպքում):»,

ժե. 18-րդ կետում «աշխատունակությունը» բառը փոխարինել «աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողությունը» բառերով,

ժզ. 18-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 18.1-ին կետով.

«18.1. Տևական հիվանդության (երկարատև ժամանակավոր անաշխատունակության նույն դեպքի՝ քրոնիկական հիվանդության սրացման, վնասվածքների և այլ հիվանդությունների) պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում՝ հաշմանդամություն ունեցող աշխատող անձին, բացառությամբ աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության երրորդ աստիճանի կենսագործունեության սահմանափակում ունեցող անձի, անաշխատունակության թերթիկ տրվում է հիվանդության ամբողջ ժամանակաշրջանի համար՝ մինչև օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակի վերականգնումը կամ հաշմանդամության խմբի վերանայումը՝առավելագույնը 3 ամիս ժամկետով:»,

ժէ. 19-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«19. Տևական հիվանդության (երկարատև ժամանակավոր անաշխատունակության նույն դեպքերի՝ քրոնիկական հիվանդության սրացման, վնասվածքների և այլ հիվանդությունների) դեպքում, բացառությամբ վերականգնման հեռանկարի բացակայություն ունեցող հիվանդությունների, անձը բժշկասոցիալական փորձաքննության է ուղեգրվում ժամանակավոր անաշխատունակությունն սկսելու օրվանից հետո 80-րդ օրը (ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ դրան նախորդող աշխատանքային օրը), եթե անձի աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողությունը դեռևս չի վերականգնվել: Հիվանդը բժշկասոցիալական փորձաքննության է ենթարկվում եռամսյա ժամկետը լրանալու օրվանից ոչ ուշ:»,

ժը. 26-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«26. Սույն կարգի 25-րդ կետով սահմանված դեպքում՝ անձի բնակության վայրի բժշկական հաստատության կողմից տրվող անաշխատունակության թերթիկը, որպես ժամանակավոր անաշխատունակության յուրաքանչյուր հաջորդ ժամանակահատվածի համար տրվող անաշխատունակության թերթիկ, լրացվում է սույն կարգի 10-րդ կետով սահմանված կարգով:»,

ժթ. 27-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

ի. 34-րդ կետում «որպես» բառը փոխարինել «ըստ անհրաժեշտության, որպես 140 օրացուցային օր տևողությամբ տրված» բառերով,

իա. 36-րդ կետում «հետծննդյան» բառը փոխարինել «ծննդաբերության» բառով.

11) որոշման N 6 հավելվածի՝

ա. վերնագրում «ԹԵՐԹԻԿՆ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԻ» բառերը փոխարինել «ԹԵՐԹԻԿԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ» բառերով,

բ. 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-ին կետով.

«2.1. Անկախ պետությունների համագործակցության անդամ երկրների բժշկական հաստատության տված ժամանակավոր անաշխատունակության թերթիկն առանց զինանշանի պատկերով կնիքի լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը բժշկական փաստաթղթերի իսկությունը և համապատասխանությունը պարզում է գրավոր հարցումով՝ հարցում կատարելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը դիմումատուի տված՝ նոտարի վավերացրած լիազորագրի հիման վրա:»,

գ. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը ներկայացված փաստաթղթերի (այդ թվում՝ սույն կարգի 2.1-ին կետում նշված հարցմանն ի պատասխան՝ Անկախ պետությունների համագործակցության անդամ երկրի բժշկական հաստատությունից բժշկական փաստաթղթերի իսկությունը և համապատասխանությունը հավաստող փաստաթղթի) հիման վրա տալիս է քաղաքացուն անաշխատունակության թերթիկ տրամադրելու մասին գրավոր թույլտվություն:».

12) որոշման N 7 հավելվածի՝

ա. վերնագիրը «ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ» բառից հետո լրացնել «ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ» բառերով,

բ. 1-ին կետում «անաշխատունակության նպաստի» բառերը փոխարինել «ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստի» բառերով,

13) որոշման N 8 հավելվածի՝

ա. վերնագրում «ՎՃԱՐՎԱԾ» բառը փոխարինել «ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂԻՆ ՎՃԱՐՎԱԾ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ» բառերով,

բ. 1-ին կետը «անաշխատունակության» բառից հետո լրացնել «և մայրության» բառերը, իսկ «վճարված նպաստը» բառերը փոխարինել «վարձու աշխատողին վճարված մայրության նպաստը (այսուհետ՝ նպաստ)» բառերով,

գ. 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին կետով.

«1.1. Եթե վարձու աշխատողի նպաստը հաշվարկվել է ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափի և նվազագույն ամսական աշխատավարձի նկատմամբ հաշվարկված եկամտային հարկի հանրագումարի հիսուն տոկոսից, ապա հետպահում չի կատարվում:»,

դ. 2-րդ կետում «գործատուն» բառը փոխարինել «նպաստը հաշվարկող գործատուն (այսուհետ՝ գործատու), իսկ հարկային գործակալի պարտավորություններից ազատված գործատուի դեպքում՝ լիազոր մարմինը, սույն կարգով գործատուի համար սահմանված կարգով» բառերով,

ե. 7-րդ կետը «գումարի չափը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն կարգի 9.2-րդ կետում նշված դեպքի,» բառերով, 1-ին ենթակետում «հղիության և ծննդաբերության նպաստի» բառերը փոխարինել «նպաստի» բառերով, իսկ 2-րդ ենթակետից հանել «ավելի» բառը,

գ. 7-րդ կետի 1-ին ենթակետից հանել «հղիության և ծննդաբերության» բառերը, իսկ 2-րդ ենթակետից հանել «ավելի» բառը,

է. 9-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9.1-ին, 9.2-րդ, 9.3-րդ և 9.4-րդ կետերով.

«9.1. Համատեղությամբ աշխատելու դեպքում վարձու աշխատողին նշանակված (վճարված) նպաստը վերահաշվարկվում է, եթե՝

1) հղիության և ծննդաբերության արձակուրդն ընդհատվում է (այդ թվում՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետևանքով) գործատուներից որևէ մեկի մոտ.

2) միաժամանակ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձ հանդիսացող վարձու աշխատողը վերսկսում է ժամանակավորապես դադարեցված ձեռնարկատիրական գործունեությունը կամ դադարեցնում է ձեռնարկատիրական գործունեությունը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում) կամ որպես նոտար ավարտում է պաշտոնավարելը կամ ընդհատում է հղիության և ծննդաբերության արձակուրդը:

9.2. Սույն կարգի 9.1-ին կետում նշված դեպքերում հետպահվող գումարի չափը որոշվում է հետևյալ կարգով՝

1) վերահաշվարկվում է (համամասնորեն նվազեցվում է) միջին ամսական աշխատավարձը: Համամասնությունը որոշվում է նպաստ հաշվարկելու ժամանակահատվածի (այն ժամանակահատվածի, որի համար հաշվարկվել է նպաստ) առաջին օրվանից մինչև աշխատանքային պայմանագիրը լուծելու (գործունեությունը դադարեցնելը կամ ժամանակավորապես դադարեցրած գործունեությունը վերսկսելը) օրն ընկած ժամանակահատվածի օրերի թիվը նպաստ հաշվարկած ժամանակահատվածի (այն ժամանակահատվածի, որի համար հաշվարկվել է նպաստ) բոլոր օրերի թվին բաժանելու միջոցով.

2) վերահաշվարկվում է նպաստի ու վճարման ենթակա եկամտային հարկի չափը՝ նպաստ հաշվարկելու ժամանակահատվածի առաջին օրվանից մինչև աշխատանքային պայմանագիրը լուծելու (գործունեությունը դադարեցնելու կամ ժամանակավորապես դադարեցրած գործունեությունը վերսկսելու) օրն ընկած ժամանակահատվածի օրերի համար.

3) նպաստի՝ նախկինում հաշվարկված և վերահաշվարկված չափերի տարբերությունից հանվում է եկամտային հարկի՝ վճարված և վճարման ենթակա գումարի տարբերությունը՝ արդյունքն արձանագրելով որպես հետպահվող գումարի չափ:

9.3. Համատեղությամբ աշխատելու դեպքում վարձու աշխատողի մոտ սույն կարգի 9.1-ին կետում նշված հանգամանքներից որևէ մեկն ի հայտ գալու մասին տեղեկատվությունը հիմնական գործատուին տրամադրում է հարկային մարմինը՝ գործատուի կողմից գրանցման հայտ կամ ինքուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի կողմից համապատասխան հայտարարություն ներկայացվելուց հետո՝ էլեկտրոնային եղանակով: Տեղեկատվությունը ներառում է՝

1) վարձու աշխատողի նույնականացման տվյալները (անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը).

2) ըստ անհրաժեշտության՝ գործատուի նույնականացման տվյալները (անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը), որի մոտ ընդհատվել է վարձու աշխատողի հղիության և ծննդաբերության արձակուրդը, հղիության և ծննդաբերության արձակուրդն ընդհատվելու օրը, ամիսը, տարեթիվը.

3) ըստ անհրաժեշտության՝ որպես անհատ ձեռնարկատեր դադարեցրած ձեռնարկատիրական գործունեությունը վերսկսելու կամ ձեռնարկատիրական գործունեությունը դադարեցնելու օրը, ամիսը, տարեթիվը.

4) ըստ անհրաժեշտության՝ որպես նոտար պաշտոնավարելն ավարտելու կամ հղիության և ծննդաբերության արձակուրդն ընդհատվելու օրը, ամիսը, տարեթիվը:

9.4 Համատեղությամբ աշխատող վարձու աշխատողին նշանակված (վճարված) նպաստը վերահաշվարկվում է նաև, եթե նա ներկայացրել է սույն կարգի 9.1-ին կետում նշված հանգամանքներն ի հայտ գալը հավաստող փաստաթղթեր:».

14) որոշման N 9 հավելվածի՝

ա. վերնագրում «ՆՊԱՍՏԻ ԳՈՒՄԱՐԻ» բառերը փոխարինել «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ» բառերով,

բ. 1-ին կետում «նպաստների» բառը փոխարինել «և մայրության նպաստների» բառերով, «ավելի վճարված նպաստի» բառերը՝ «վճարված ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների (այսուհետ՝ նպաստ)» բառերով, իսկ 1-ին և 9-րդ կետերում «հղիության և ծննդաբերության» բառերը՝ «մայրության» բառով,

գ. 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին կետով.

«1.1. Եթե ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի մայրության նպաստը հաշվարկվել է ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափի և նվազագույն ամսական

աշխատավարձի նկատմամբ հաշվարկված եկամտային հարկի հանրագումարի հիսուն տոկոսից, ապա հետպահում չի կատարվում։»,

դ. 5-րդ կետը «չափերի» բառից հետո լրացնել «տարբերությունից հանած եկամտային հարկի՝ վճարված և վճարման ենթակա գումարի» բառերով։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ 1-ին կետի 10-րդ ենթակետի «գ» պարբերության, որն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից։

3. Սահմանել, որ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը սահմանված ձևի ժամանակավոր անաշխատունակության թերթիկները վավեր են։

4. Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը սահմանված ձևի ժամանակավոր անաշխատունակության թերթիկներում հատման գծից վերև ընկած մասում ժամանակավոր անաշխատունակության թերթիկ տալու ամսաթիվը լրացվում է ժամանակավոր անաշխատունակության թերթիկ տվողի կողմից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թ. օգոստոսի
Երևան